# ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ
# NATURAL RESOURCES AND ENVIRONMENT
# ПРИРОДНЫЕ РЕСУРСЫ И ОКРУЖАЮЩАЯ СРЕДА

**Անտառային ֆոնդի** տարածքը Հայաստանի Հանրապետության տարածքի այն մասն է, որը ծածկված է անտառով, ինչպես նաև այն ոչ անտառապատ տարածքը, որը տրամադրված է անտառային տնտեսության կարիքների համար: Անտառային ֆոնդը ներառում է անտառապատ տարածքը (փաստացի ծածկված ծառերի տեսակներով, տնկիների տարատեսակներով), ոչ անտառապատ տարածքը՝ գյուղատնտեսական հողատեսքեր (վարելահող, խոտհարք, արոտավայր և այլն), հատուկ նշանակության տարածքներ (ճանապարհներ, ջրանցքներ, տնամերձեր և այլն), ինչպես նաև ճահճային տարածքներ, ավազուտներ, հեղեղատներ, թեք լեռնալանջեր և այլն:

**Տարածքի անտառապատվածությունը** անտառով ծածկված մակերեսի հարաբերությունն է հանրապետության ողջ տարածքին:

**Փայտանյութի ընդհանուր պաշարը** փայտանյութի աճող մասի, անկումների (տապալվածքների) և միջանկյալ օգտագործման պաշարների գումարն է:

**Անտառաշինությունը** միջոցառումների համակարգ է, որն իր մեջ ներառում է անտառի սահմանների որոշումը, անտառի բաժանումը մասերի և անտառտնկիների հատվածների, խմբերի, պաշտպանվածության կարգերի (ջրապահպան, պաշտպանողական, սանիտարահիգիենիկ, առողջարարական և այլն), անտառային ֆոնդի գույքագրումը (անտառի մակերեսը և փայտանյութի պաշարը),անտառի տարեկան օգտագործման ծավալների որոշումը (հաշվարկային անտառհատում), անտառվերականգնումը և այլն:

**Անտառվերականգնումը** միջոցառումների անցկացումն է ուղղված հատատեղերի, այրված, ամայացած վայրերի, բացատների և նախկինում անտառածածկ այլ մակերեսների վերականգնմանը: Անտառվերականգնումը ներառում է անտառի տնկումը, ցանքսը և անտառի բնական վերականգնմանն աջակցող միջոցառումները:

**Forest area** is a part of forest covered territory of Armenia as well as territory not covered by forest, but used for forestry needs. Forest stock includes forest area, i.e. forest covered territory (actually covered by plantations of trees) and territory not covered by forest but intended for forestation (burnt out areas, cutting areas, waste grounds, glades, areas of dead plantations ). Besides, forest stock includes non-forest areas: agricultural lands (hayfields, pastures, arable land), special purpose areas (roads, ditches, country estates etc.), and also swamps, sands, ravines, steep hillsides and other territories.

**Forest content** - ratio of forest covered territory to the whole territory of the republic.

**Total stock of timber** - the sun of growing part of timber, felling and intermediate use stock.

**Forest management** is the system of activities comprising demarcation, division of forests into plots, groups and categories (water protection forests, sanitary forests, etc); inventories of forest resources (forest area and timber stocks); estimation of the size of annual felling area; reforestation and other activities.

**Reforestation** comprises activities aimed at restoration of forests on cutting areas, burnt out areas, waste grounds, glades and other former forest lands. Reforestation includes planting, sowing and measures promoting natural renewal of forests.

**Площадь лесного фонда**-это часть территории Республики Армения, занятая лесом, а также не занятая им, но предназначенная для нужд лесного хозяйства. Лесной фонд включает площадь покрытую лесом (фактически занятую древесными породами, насаждениями разных видов), не покрытую лесом: сельскохозяйственные угодья (пашни, сенокосы, пастбища), площади особого назначения (дороги, канавы, усадьбы и др.), а также площади болот, песков, оврагов, крутых склонов и другие территории.

**Лесистость территории** - отношение покрытой лесом площади ко всей территории республики.

**Общий запас древесины** -сумма запасов растущей части древестоя, отпада и промежуточного пользования.

**Лесоустройство** - система мероприятий, включающая определение границ, деление леса на выделы и участки лесонасаждений, группы, категории защитности (водоохранные, защитные, санитарно-гигиенические и оздоровительные и т.д.); инвентаризацию лесного фонда (площадь леса и запас древесины); определение размера ежегодного пользования лесом (расчетная лесосека), лесовосстановление и другие.

**Лесовосстановление** - проведение мероприятий по восстановлению лесов на вырубках, гарях, пустырях, прогалинах и иных бывших под лесом площадях. Лесовосстановление включает посадку, посев леса и содействие естественному возобновлению леса.

**Գլխավոր օգտագործման անտառհատումը և անտառվերականգնողական հատումները** փայտանյութի պատրաստման նպատակով հասուն ծառերի հատումն է:

**Անտառպաշտպանական հատումները** իրականացվում են ըստ տնկիների աճի ու զարգացման և նպատակաուղղված են ծառերի և թփերի մի մասի պարբերական հատմամբ տնկարկների մնացած մասի հետագա աճի պայմանների բարելավմանը:

**Բնական աղբյուրներից ջրառն օգտագործման նպատակով**՝ մակերևութային ջրային օբյեկտներից և ստորգետնյա հորիզոններից հետագա օգտագործման նպատակով վերցված ջրային պաշարների ծավալն է: Այս ցուցանիշի մեջ չի հաշվառվում էլեկտրաէներգիայի արտադրության ժամանակ հիդրոհանգույցներով բաց թողնված, ձկան բացթողնման ջրի քանակները և այլն:

**Ջրօգտագործումը (ջրասպառումը)**՝ տարբեր կարիքների բավարարման նպատակով տարբեր ջրաղբյուրներից վերցված ջրային պաշարների օգտագործումն է: Այստեղ չեն հաշվառվում շրջադարձային ջրօգտագործումը, ինչպես նաև կեղտաջրերի և կոլեկտորացամաքուրդային ջրերի կրկնակի օգտագործումը:

**Կեղտաջրերի բացթողումը** մակերևութային ջրային օբյեկտներ իր մեջ ներառում է չափորոշային մաքուր, չափորոշային մաքրված և կեղտաջրերի ծավալները:

**Չափորոշային մաքուր կեղտաջրերն** այն հոսքերն են, որոնք առանց մաքրելու թափելը ջրային օբյեկտներ չի հանգեցնում ջրօգտագործման հսկվող հատվածքներում կամ կետերում ջրի որակի չափորոշների խախտմանը:

**Չափորոշային մաքրված կեղտաջրերը** համապատասխան մաքրման կառույցներում մաքրված կեղտաջրերն են, որոնց մաքրվելուց հետո բացթողնումը ջրային օբյեկտներ չի հանգեցնում ջրօգտագործման հսկվող կետերում ջրի որակի չափորոշների խախտմանը, այսինքն այդ կեղտաջրերում աղտոտիչ նյութերի պարունակությունը պետք է համապատասխանի արտահոսքի սահմանային թույլատրելի չափաքանակներին:

**Fellings of forests of main use and reforestation fellings** are carried out in mature forests for procurement of timber.

**Maintenance fellings** are carried out in the process of growing and maturing of plantations. It supposes cutting down of selected trees and bushes to secure better conditions of growth for other trees.

**Water abstraction from natural sources** is removal of water from surface water bodies and aquifers for consumption. This does not include water used for electric power generation, ship locking, passage of fish and maintenance of navigable depth.

**Water consumption (use)** means use of water removed from different sources for communal and household needs. Consumption of recycled water and reuse of waste and sewage water is excluded.

**Waste water discharge into surface reservoirs** includes amounts of water pure corresponding to standards, water purified according to standards and contaminated run-offs.

**Waste water pure according to standards** refers to run-offs that discharged without treatment do not deteriorate quality standards in monitored places of water supply.

**Waste water purified according to standards** is defined as run-offs purified at treatment plants. Discharge of this water does not deteriorate quality standards in monitored place of water supply, i.e. the pollutants' content should correspond to the agreed maximum permissive discharge .

**Рубки леса главного пользования и лесовосстановительные рубки** проводятся в спелых древостоях для заготовки древесины.

**Рубки ухода за лесом** проводятся по мере роста и развития насаждений и заключаются в периодической вырубке части деревьев и кустарников, направленной на улучшение условий для дальнейшего выращивания оставляемой части насаждений.

**Забор воды из природных источников** - объем изъятия водных ресурсов из поверхностных водных обектов и подземных горизонтов с целью дальнейшего использования воды. В этот показатель не включается объем пропуска воды через гидроузлы для производства электроэнергии, пропуска рыбы и другие.

**Водопотребление ( использование воды)** - использование забранных из различных источников водных ресурсов для удовлетворения хозяйственных нужд. Сюда не включаются оборотное водопотребление, а также повторное использование сточной и коллекторно-дренажной воды.

**Сброс сточных вод в поверхностные водоемы** включает в себя объемы нормативно-чистых, нормативно-очищенных и загрязненных стоков.

**Нормативно-чистые сточные воды** - стоки, отведение которых без очистки в водные объекты не приводит к нарушению норм и качества вод в контролируемом створе или пункте водопользования.

**Нормативно-очищенные сточные воды** - стоки, которые прошли очистку на соответствующих сооружениях, и отведение которых после очистки в водные объекты не приводит к нарушению норм качества воды в контролируемом створе или пункте водопользования, то есть содержание загрязняющих веществ в этих сточных водах должно соответствовать утвержденному предельно-допустимому сбросу .

**Կեղտաջրերն** արտադրական և կենցաղային (կոմունալ) հոսքերն են (չմաքրված կամ ոչ բավարար մաքրված), որոնք բաց են թողնվել մակերևութային ջրային օբյեկտներ և որոնցում պարունակվող աղտոտիչ նյութերի քանակը գերազանցում է սահմանային թույլատրելի չափաքանակներին:

**Մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման անշարժ (ամրակայված) աղբյուր** է կոչվում շահագործման ընթացքում վնասակար նյութեր արտանետող ոչ շարժական տեխնոլոգիական ագրեգատը (սարք, սարքավորում և այլն), որից շահագործման գործընթացում անջատվում են վնասակար նյութեր:

**Որսված (վնասազերծված) նյութերի քանակը** ներառում է բոլոր տեսակի աղտոտիչները, որոնք որսվում (վնասազերծվում) են փոշեորսիչ (գազամաքրիչ) կայանքներում անշարժ (ամրակայված) աղբյուրներից անջատված վնասակար նյութերի ընդհանուր ծավալից:

**Անշարժ (ամրակայված) աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի կազմում հաշվառվում է** բոլոր աղտոտիչների ընդհանուր քանակը, որոնք օդային ավազան են արտանետվում ինչպես փոշեգազամաքրիչ կայանքներից անցնելուց հետո, այնպես էլ առանց մաքրման (կազմակերպված և չկազմակերպված աղբյուրներից):

**Արգելոցները՝** յուրահատուկ կամ աշխարհագրական գոտուն առավել բնորոշ տարածքի հատվածներ են, որոնք հանվել են տնտեսական օգտագործումից՝ բնության պահպանության և ուսումնասիրության նպատակով: Արգելոցների խնդիրներից է նաև կենդանիների և բույսերի արժեքավոր տեսակների վերականգնումը:

**Բնական ազգային զբոսայգիները՝** բնական համակարգերի պահպանման նպատակով կազմակերպված հատուկ էկոլոգիական, պատմական, գեղագիտական արժեք ունեցող՝ բնական և մշակութային բնապատկերի բարենպաստ համատեղությամբ տարածքի հատվածներն են, որոնք օգտագործվում են հանգստի, լուսավորչական, գիտական և մշակութային նպատակներով:

**Polluted waste water** represents the run-offs discharged into surface water bodies without treatment (or after insufficient treatment),with pollutants' content exceeding the agreed MPD.

**Stationary source of air polluting emissions** is defined as immobile technological unit (device, apparatus,etc) , that in the process of work emits contaminating substances in the air.

**Volume of pollutants captured (detoxified)** includes all types of pollutants captured (detoxified) by dust-arresting (gas-cleaning) plants out of the total volume of pollutants emitted by stationary sources.

**Harmful substances emitted into atmosphere by stationary sources** include total amount of all contaminants coming to air basin both after treatment at dust-arresting (gas-cleaning) plants (as a result of insufficient capture and treatment) and without treatment (contaminats from organized and non-organized sources).

**Nature reserves** - are the special territories typical for geographic zone, which are excluded from economic use to protect and study the nature. The purpose of nature reserves is the restoration of valuable animals and plants.

**Natural national parks** - are the territories for protection of natural complexes having ecologic, historic, aesthetic value in favorable combination with natural and cultural lands capes, they are used for rest,educational scientific purposes.

**Загрязненные сточные воды** - стоки, сброшенные в поверхностные водные объекты без очистки (или после недостаточной очистки) и содержащие загрязняющие вещества в количествах, превышающих утвержденный предельно-допустимый сброс.

**Стационарным источником выделения вредных веществ в атмосферный воздух** называется непередвижной технологический агрегат (установка, устройство, аппарат и т.п.), выделяющий в процессе эксплуатации вредные вещества.

**Количество уловленных (обезвреженных) вредных веществ** включает все виды загрязнителей, уловленных (обезвреженных) на пылеулавливающих (газоочистных) установках из общего их объема, отходящего от стационарных источников.

**В состав вредных веществ, выброшенных в атмосферу стационарными источниками**, входит общее количество всех загрязнителей, поступивших в воздушный бассейн как после прохождения пылегазоочистных установок (в результате неполного улавливания и очистки), так и без очистки (от организованных и неорганизованных источников).

**Заповедники**-уникальные или наиболее типичные для географических зон участки территории, изъятые из хозяйственного пользования для сохранения и изучения природного комплекса. Целью заповедников служит также восстановление ценных животных и растений.

**Природные национальные парки**-участки территории, образуемые для сохранения природных комплексов, имеющих особую экологическую, историческую и эстетическую ценность в силу благоприятного сочетания естественных и культурных ландшафтов, и используемые в рекреационных, просветительных, научных и культурных целях.

## 158. ՀՈՂԱՅԻՆ ՄԱԿԵՐԵՍԸ
## LAND AREA
## ЗЕМЕЛЬНАЯ ПЛОЩАДЬ

(1 000 հա) (1 000 ha) (1 000 га)

| | 01.07.2011 | 01.07.2012 | 01.07.2013 | 01.07.2014 | 01.07.2015 | |
|---|---|---|---|---|---|---|
| **Ընդհանուր հողային տարածքը**[1] | **2 974.3** | **2 974.3** | **2 974.3** | **2 974.3** | **2 974.3** | **Total land area**[1] **Общая площадь земель**[1] |
| այդ թվում` | | | | | | of which: в том числе: |
| գյուղատնտեսական նշանակության հողեր | 2 076.9 | 2 052.4 | 2 051.0 | 2 049.4 | 2 045.7 | agricultural land земли сельскохозяйственного значения |
| բնակավայրերի հողեր | 152.2 | 151.6 | 151.7 | 151.8 | 151.8 | settlements land земли населенных пунктов |
| որից` | | | | | | of which из них: |
| տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողեր | 94.9 | 94.4 | 94.6 | 94.5 | 94.5 | homestead and gardening land приусадебные и садоводческие (дачные) |
| արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր | 33.0 | 33.6 | 34.9 | 36.4 | 36.5 | land of industrial, use of entrails of the earth and other production purpose земли промышленного, недропользования и другого производственного значения |
| էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր | 12.8 | 12.5 | 12.6 | 12.6 | 12.6 | land of objects of energetic, communication, transport, communal infrastructure земли объектов энергетики, связи, транспорта, коммунальной инфраструктуры |
| հատուկ պահպանվող տարածքների հողեր | 298.0 | 331.9 | 331.7 | 331.7 | 335.4 | land of special protected territories земли особо охраняемых территорий |
| հատուկ նշանակության հողեր | 31.7 | 31.6 | 31.6 | 31.6 | 31.6 | land with special purpose земли особого значения |
| անտառային հողեր | 343.1 | 334.2 | 334.3 | 334.3 | 334.2 | forest land лесные земли |
| որից` | | | | | | of which: из них: |
| անտառածածկ հողեր | 296.5 | 289.3 | 289.4 | 289.5 | 289.3 | covered with forest lands покрытые лесами земли |
| ջրային հողեր | 26.0 | 25.9 | 25.9 | 25.9 | 25.9 | water land водные земли |
| պահուստային հողեր | 0.6 | 0.6 | 0.6 | 0.6 | 0.6 | reserve land запасные земли |

[1] Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից կազմված ՀՀ հողային հաշվեկշռի:
According to RA land balance formed by the State Committee of Real Estate Cadastre under RA Government.
По земельному балансу РА, составляемого Государственным комитетом кадастра недвижимого имущества при Правительстве РА.

## 159. ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ
MINERAL GEOLOGY AND PROSPECTING
ГЕОЛОГИЯ И РАЗВЕДКА НЕДР

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | |
|---|---|---|---|---|---|---|
| Կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների ծավալը, ընդամենը, մլն. դրամ | 108.1 | 153.7 | 125.0 | 1 332.7 | 717.8 | Volume of geological-prospecting work, total, mln.drams<br>Объем проделанных геологоразведочных работ, всего, млн. драмов |
| այդ թվում` պետական բյուջեի հաշվին | 3.9 | - | - | - | - | of which: at the expense of state budget<br>в том числе: за счет средств государственного бюджета |
| Հորատանցքերի միջին խորությունը, մ | 50.0 | - | - | 131.7 | 63.9 | Average depth of holls, m<br>Средняя глубина скважин, м |

## 160. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
MAIN INDICATORS CHARACTERIZING THE IMPACT OF HUMAN ECONOMIC ACTIVITY ON THE ENVIROMENT AND USE OF NATURAL RESOURCES
ОСНОВНЫЕ ПОКАЗАТЕЛИ, ХАРАКТЕРИЗУЮЩИЕ ВОЗДЕЙСТВИЕ ХОЗЯЙСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ И ИСПОЛЬЗОВАНИЕ ПРИРОДНЫХ РЕСУРСОВ

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | |
|---|---|---|---|---|---|---|
| Ջրառը ջրաղբյուրներից, մլն. $մ^3$ | 2 438 | 2 941 | 2 955 | 2 860 | 3 272 | Water abstraction from water resources, $mln.m^3$<br>Забор воды из водных источников, $млн.м^3$ |
| Ջրհեռացումը, մլն. $մ^3$ | 750 | 813 | 938 | 847 | 811 | Waste water discharge, mln. $m^3$<br>Сброс сточных вод, млн. $м^3$ |
| Մթնոլորտ արտանետված վնասակար նյութերը, 1 000 տ | 269.3 | 259.8 | 261.4 | 270.9 | 268.7 | Emissions of hazardous substances into atmosphere, 1 000 t<br>Выброс вредных веществ в атмосферу, 1 000 т |
| այդ թվում` | | | | | | of which:<br>в том числе: |
| արտանետման անշարժ աղբյուրներից | 114.6 | 117.4 | 119.7 | 128.4 | 128.9 | from stationary sources<br>от стационарных источников |
| ավտոտրանսպորտից | 154.7 | 142.4 | 141.7 | 142.5 | 139.8 | from vehicles<br>от автотранспорта |

## 161. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ
## MAIN ACTIVITIES IN FORESTRY
## ПРОВЕДЕНИЕ ОСНОВНЫХ РАБОТ В ЛЕСНОМ ХОЗЯЙСТВЕ

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | |
|---|---|---|---|---|---|---|
| Անտառվերականգնումը, հա | 52 | 178 | 275 | 57 | 9 | Reforesteration, ha<br>Лесовосстановление, га |
| այդ թվում՝ անտառի տնկում և ցանք | 52 | 178 | 275 | 42 | 9 | of which: planting and sowing of forests<br>в том числе: посадка и посев леса |
| Անտառմշակույթների փոխադրումն անտառի շարք, հա | 35 | 66 | 30 | 21 | 35 | Conversion of forest culture into forest, ha<br>Перевод лесных культур в лесопокрытые земли, га |
| Ընդհանուր անտառհատումներ | | | | | | Total fellings<br>Общая рубка лесов |
| մակերեսը, հա | 1 603 | 1 417 | 2 539 | 1 558 | 1 501 | area, ha<br>площадь, га |
| հատվել է լիկվիդային փայտանյութ, 1 000 խիտ մ$^3$ | 33.2 | 37.9 | 35.6 | 36.6 | 28.0 | liquid timber felled, 1 000 m$^3$ of trunk wood<br>вырублено ликвидной древесины, 1000 плотных м$^3$ |
| որից՝ սանիտարական | | | | | | of which: sanitary<br>в том числе санитарные: |
| մակերեսը, հա | 808 | 718 | 1 598 | 823 | 651 | area, ha<br>площадь, га |
| հատվել է լիկվիդային փայտանյութ, 1 000 խիտ մ$^3$ | 17.3 | 16.7 | 16.1 | 20.3 | 12.6 | liquid timber felled, 1 000 m$^3$ of trunk wood<br>вырублено ликвидной древесины, 1000 плотных м$^3$ |
| նոսրացման | | | | | | thinning out<br>для прореживания |
| մակերեսը, հա | 80 | 79 | 87 | 67 | 150 | area, ha<br>площадь, га |
| հատվել է լիկվիդային փայտանյութ, 1 000 խիտ մ$^3$ | 1.6 | 1.3 | 1.2 | 0.7 | 2.3 | liquid timber felled, 1 000 m$^3$ of trunk wood<br>вырублено ликвидной древесины, 1 000 плотных м$^3$ |
| անցումային | | | | | | transitory<br>проходной |
| մակերեսը, հա | 532 | 574 | 693 | 569 | 700 | area, ha<br>площадь, га |
| հատվել է լիկվիդային փայտանյութ, 1 000 խիտ մ$^3$ | 12.8 | 18.5 | 15.9 | 13.0 | 13.1 | liquid timber felled, 1 000 m$^3$ of trunk wood<br>вырублено ликвидной древесины, 1 000 плотных м |

## 162. ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻՑ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ FOREST PROTECTION FROM VERMIINS AND FOREST DISEASES ЗАЩИТА ЛЕСОВ ОТ ВРЕДИТЕЛЕЙ И БОЛЕЗНЕЙ ЛЕСА

(1 000 հա) (1 000 ha) (1 000 га)

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | |
|---|---|---|---|---|---|---|
| Վարակված օջախների ընդհանուր մակերեսը | 13.8 | 12.6 | 13.9 | 9.5 | 9.5 | Total surface of infected hearths<br>Общая площадь зараженных очагов |
| որից՝ վարակված անտառային հիվանդություններով | 9.2 | 11.0 | 9.7 | 7.8 | 8.3 | of which: infected by forest diseases<br>в том числе: зараженных лесными заболеваниями |
| Բուժում պահանջող վարակված օջախնե-րի մակերեսը | 8.2 | 14.0 | 13.9 | 9.5 | 9.5 | Surface of infected hearths demanding treatment<br>Площадь зараженных очагов, требу-ющих лечение |
| Պայքարի միջոցառումներով վերացված վարակված օջախների մակերեսը | 0.1 | 9.2 | 8.9 | 6.4 | 0.06 | Surface of infected hearths liguidated by fight mesures<br>Пощадь очагов заражения, ликвидированных мерами борьбы |

## 163. ԱՆՏԱՌԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐ FOREST BREACHES AND FOREST FIRES ЛЕСОНАРУШЕНИЯ И ЛЕСНЫЕ ПОЖАРЫ

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | |
|---|---|---|---|---|---|---|
| Անտառախախտումների քանակը | 218 | 200 | 190 | 240 | 317 | Number of forest breaches<br>Число лесонарушений |
| այդ թվում՝ ապօրինի ծառա-հատումներ | 187 | 194 | 179 | 231 | 315 | of which: illegal tree fellings<br>в том числе: незаконная вырубка деревев |
| Հրդեհների քանակը, դեպք | 56 | 63 | 23 | 44 | 41 | Number of forest fires, cases<br>Число пожаров, случаев |
| Հրդեհված անտառածածկ տարածքը, հա | 421.2 | 170.4 | 39.4 | 28.1 | 89.7 | Forest area affected by fires, ha<br>Лесная площадь, охваченная пожа-рами, га |

## 164. ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑՆԵՐ, ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԵՐ
STATE NATURE RESERVES, FOREST RESERVE AREAS AND NATIONAL PARKS
ГОСУДАРСТВЕННЫЕ ЗАПОВЕДНИКИ, ЗАПРЕТНЫЕ ЗОНЫ И НАЦИОНАЛЬНЫЕ ПАРКИ

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | |
|---|---|---|---|---|---|---|
| Պետական արգելոցների և ազգային պարկերի քանակը | 7 | 7 | 7 | 7 | 7 | Number of state reserves and national parks<br>Число государственных заповедников и национальных парков |
| դրանց տարածքը, 1 000 հա | 272.1 | 272.1 | 272.1 | 272.1 | 269.1 | their area, 1 000 ha<br>их площадь, 1 000 га |
| Պետական արգելոցների և ազգային պարկերի պահպանման ծախսերը, մլն. դրամ | 787.2 | 879.0 | 969.0 | 1 120.8 | 1 298.1 | Cost of maintenance of state reserves and national parks, mln. drams<br>Затраты на содержание государственных заповедников и национальных парков, млн. драмов |
| Պետական արգելավայրերի քանակը | 26 | 26 | 27 | 27 | 27 | Number of state sanctuaries<br>Число государственных заказников |
| դրանց տարածքը*, 1 000 հա | 96.2 | 96.1 | 111.5 | 111.5 | 114.1 | their area*, 1 000 ha<br>их площадь*, 1 000 га |

* Աղբյուրը՝ ՀՀ բնապահպանության նախարարություն: Պետական արգելավայրերի սահմանները և զբաղեցրած տարածքները մոտավոր են և պաշտոնապես հաստատված չեն:
**Soure:** Ministry of Nature Protection of RA. The territory and borders of state sanctuaries are appromate and are not officially confirmed.
**Источник:** Министерство охраны природы. РА . Территория и границы государственных заказников являются приблезительными и официально не подтверждены.

## 165. ՋՐԱՌԸ ԵՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
WATER ABSTRACTION AND CONSUMPTION
ВОДОЗАБОР И ВОДОПОТРЕБЛЕНИЕ

(մլն. մ³) (mln. m³) (млн. м³)

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | |
|---|---|---|---|---|---|---|
| Ջրառը, ընդամենը | 2 438.3 | 2 941.1 | 2 955.1 | 2 860.2 | 3 271.7 | Water abstraction, total<br>Водозабор, всего |
| այդ թվում՝ ստորգետնյա աղբյուրներից | 1 002.8 | 1 314.4 | 1 148.7 | 1 312.0 | 1 304.5 | of which: from underground sources<br>в том числе: из подземных источников |
| Ընդամենը օգտագործվել է ջուր | 1 738.1 | 2 187.2 | 2 089.1 | 2 112.8 | 2 533.1 | Total consumption<br>Всего использовано воды |
| այդ թվում ըստ կարիքների՝ | | | | | | of which for:<br>в том числе на: |
| խմելու | 74.8 | 75.3 | 83.7 | 122.3 | 96.5 | drinking<br>питьевые |
| արդյունաբերություն, կոմունալ տնտեսություն և շինարարություն | 218.8 | 180.4 | 159.5 | 180.6 | 153.3 | industry, communal farms and construction<br>производство, коммунальное хозяйство и строительство |
| գյուղատնտեսություն, ձկնաբուծություն և անտառտնտեսություն | 1 444.5 | 1 931.5 | 1 845.9 | 1 809.9 | 2 283.3 | agriculture, fish breeding and forestry<br>сельское хозяйство, рыбоводство и лесное хозяйство |

Շարունակություն
Continued
Продолжение

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | |
|---|---|---|---|---|---|---|
| Ընդհանուրի նկատմամբ, % | **100** | **100** | **100** | **100** | **100** | **In % of total**<br>**К итогу, %** |
| այդ թվում ըստ կարիքների՝ | | | | | | of which for:<br>в том числе на: |
| խմելու | 4 | 4 | 4 | 6 | 4 | drinking<br>питьевые |
| արդյունաբերություն, կոմունալ տնտեսություն և շինարարություն | 13 | 8 | 8 | 8 | 6 | industry, communal farms and construction<br>производство, коммунальное хозяйство и строительство |
| գյուղատնտեսություն, ձկնաբուծություն, և անտառտնտեսություն | 83 | 88 | 88 | 86 | 90 | agriculture, fish breeding and forestry<br>сельское хозяйство, рыбоводство и лесное хозяйство |

## 166. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄԸ
## WASTE WATER DISCHARGE
## ОТВЕДЕНИЕ СТОЧНЫХ ВОД

(մլն. մ³) (mln. m³) (млн. м³)

| | **2011** | **2012** | **2013** | **2014** | **2015** | |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռացված կեղտաջրեր, ընդամենը | 750 | 813 | 938 | 846 | 811 | Waste water discharge, total<br>Отведенные сточные воды, всего |
| դրանցից՝ | | | | | | of which:<br>из них: |
| չափորոշային մաքուր (առանց մաքրման) | 388 | 407 | 799 | 611 | 560 | pure corresponding to standards; (without purification)<br>нормативно-чистые (без очистки) |
| ոչ բավարար մաքրված | 115 | 99 | 74 | 129 | 119 | insufficiently purified<br>недостаточно очищенный |
| աղտոտված (առանց մաքրման) | 247 | 307 | 65 | 106 | 132 | polluted (without purification)<br>загрязненные (без очистки) |

## 167. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ԱՆՇԱՐԺ (ԱՄՐԱԿԱՅՎԱԾ) ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ԱՆՋԱՏՎԱԾ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄԸ ԵՎ ՈՐՍՈՒՄԸ
EMISSIONS OF POLLUTANTS FROM STATIONARY SOURCES OF AIR POLLUTION AND THEIR CAPTURE
ВЫБРОСЫ И УЛАВЛИВАНИЕ ВРЕДНЫХ ВЕЩЕСТВ, ОТХОДЯЩИХ ОТ СТАЦИОНАРНЫХ ИСТОЧНИКОВ ЗАГРЯЗНЕНИЯ АТМОСФЕРНОГО ВОЗДУХА

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | |
|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը արտանետվել են վնասակար նյութեր, 1 000 տ | 114.6 | 117.4 | 119.7 | 128.4 | 128.9 | Total emission of pollutants, 1 000 t<br>Всего выброшено вредных веществ, 1 000 т |
| դրանցից` | | | | | | including:<br>из них: |
| ծծմբային անհիդրիդ | 28.8 | 29.2 | 31.8 | 32.1 | 34.1 | sulpfur anhydride<br>сернистого ангидрида |
| ազոտի օքսիդներ | 1.1 | 1.3 | 1.5 | 1.5 | 1.3 | nitric oxides<br>окислов азота |
| ածխածնի օքսիդ | 2.2 | 2.5 | 2.6 | 3.1 | 3.2 | carbon monoxide<br>окиси углерода |
| ցնդող օրգանական միացություններ | 0.4 | 0.5 | 0.4 | 0.4 | 0.3 | volatile organic compounds<br>летучих органических соединений |
| Որսված և վնասազերծված են վնասակար նյութեր, 1 000 տ | 126.6 | 151.7 | 194.7 | 117.7 | 97.0 | Pollutants captured and detoxified, 1 000 t<br>Уловлено и обезврежено загрязняющих веществ, 1 000 т |
| անշարժ (ամրակայված) աղբյուրներից անջատված ընդհանուր աղտոտիչ նյութերի նկատմամբ, % | 52.5 | 56.4 | 61.9 | 47.8 | 42.9 | in % of total amount of pollutants from stationary sources<br>отходящих от стационарных источников относительно общего количества загрязняющих веществ, % |

## 168. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՎՆԱՍԱԶԵՐԾՈՒՄԸ
FORMATION, UTILIZATION AND DETOXICATION OF WASTES IN ESTABLISHMENTS
ОБРАЗОВАНИЕ, ИСПОЛЬЗОВАНИЕ И ОБЕЗВРЕЖИВАНИЕ ОТХОДОВ В ОРГАНИЗАЦИЯХ

(1 000 տոննա) (1 000 tons) (1 000 тонн)

| Տարիներ<br>Years<br>Годы | Առաջացել է<br>Formation<br>Образовалось | Օգտագործվել է<br>Utilization<br>Использовано | Վնասազերծվել է<br>Detoxication<br>Обезврежено |
|---|---|---|---|
| 2011 | 27 609.0 | 134.0 | 0.02 |
| 2012 | 39 030.9 | 9.1 | 0.2 |
| 2013 | 49 332.1 | 5.9 | 4.3 |
| 2014 | 46 511.9 | 9.1 | 8.7 |
| 2015 | 47 338.5 | 4.6 | 0.3 |

## 169. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ
## PAYMENTS FOR ENVIRONMENT PROTECTION AND USE OF NATURAL RESOURCES
## ПЛАТЕЖИ НА ОХРАНУ ПРИРОДЫ И ЗА ПРИРОДОПОЛЬЗОВАНИЕ

(մլն. դրամ) (mln. drams) (млн. драмов)

| | 2011 | 2012[1] | 2013 | 2014 | 2015 | |
|---|---|---|---|---|---|---|
| Բնապահպանական և բնօգտագործման վճարները | 5 596.1 | 1 638.3 | 1 930.8 | 2 969.8 | 3 021.8 | Payments for environment protection, and use of natural resources<br>Платежи за природопользование и на охрану природы |
| բնապահպանական | 803.4 | 546.5 | 706.1 | 1 430.4 | 1 215.4 | environment protection<br>на охрану природы |
| որից՝ ըստ ուղղությունների. | | | | | | of which by directions:<br>нз них по направлениям: |
| անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների դիմաց | 293.7 | 163.4 | 133.8 | 131.2 | 212.7 | for air polluting emissions from stationary sources<br>за атмосферные выбросы от стационарных источников |
| աղտոտիչ նյութերը ջրային օբյեկտներ և կոյուղի թափելու դիմաց | 366.1 | 223.6 | 237.9 | 222.0 | 222.5 | for harmful substances discharge in to water bodies and sewerage<br>за сброс загрязняющих веществ в водоемы и канализацию |
| թափոնների տեղադրման դիմաց | 64.8 | 66.3 | 73.3 | 64.8 | 77.2 | for waste location<br>за размещение отходов |
| ՀՀ-ում արտադրված և իրացված, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց | 78.8 | 93.2 | 261.1 | 1 012.4[2] | 703.0 | for environmentally harmful goods produced and realized in RA<br>за реализацию и производство экологически вредных товаров в РА |
| բնօգտագործման | 4 792.7 | 1 091.9 | 1 224.7 | 1 539.4 | 1 806.4 | use of natural resources<br>за природопользование |
| որից՝ ըստ ուղղությունների. | | | | | | of which by directions:<br>нз них по направлениям: |
| բնական պաշարների օգտագործման դիմաց | 4 705.0 | 967.4 | 1 022.2 | 1 342.5 | 1 592.9 | for use natural recources<br>за использование природных ресурсов |
| կենսապաշարների օգտագործման դիմաց | 87.7 | 124.5 | 202.5 | 196.9 | 213.5 | for use of life stochs<br>за использование биоресурсов |

[1] Սկսած 2012թ. բնօգտագործման վճարներից հանվել է մետաղների արդյունահանման դիմաց վճարները:
Since 2012 payments for metal mining have been excluded from the payments for use of natural resources.
С 2012г. из платежей за природопользование сняты платежи за добычу металлов.

[2] 2014թ. ցուցանիշի աճը նախորդ տարվա համեմատ պայմանավորված է ՀՀ ֆինանսների նախարարի 2013թ.նոյեմբերի 27-ի N 1045-Ն հրամանով շրջակա միջավայրին վնաս պատճառող 2011-2013 թթ-ին ՀՀ-ում արտադրված, իրացված ապրանքների դիմաց վերահաշվարկված վճարների 2014թ-ին ներկայացված հանրագումարով:
The high figure for 2014 compared with the previous year is due to the recalculation of payments in 2014. for damage to the environment caused by the products produced and sold in the RA in 2011-2013 according to the order N1045-N of 27.11.2013 of the Minister of Finance of the RA.
Высокий показатель за 2014г. по сравнению с предыдущим годом обусловлен перерасчетом платежей в 2014г. за нанесение ущерба окружающей среде в результате продуктов, производимых и реализованных в РА за 2011-2013гг согласно приказа Ми нистра финансов РА N1045-Н от 27 ноября 2013 г.

## ԹԱՐՄ ՋՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
## FRESH WATER CONSUMPTION
## ПОТРЕБЛЕНИЕ СВЕЖЕЙ ВОДЫ

միլիոն խորանարդ մետր - million cubik metre- миллион кубических метров




ջրառ - water abstraction - водозабор

ջրօգտագործումը - water consumption - использовано воды

## ԱՆՇԱՐԺ (ԱՄՐԱԿՑՎԱԾ) ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՐՍՈՒՄԸ
## EMISSIONS OF POLLUTANTS FROM STATIONARY SOURCES INTO ATMOSPHERE AND CAPTURE HAZARDOUS SUBSTANCES
## ВЫБРОСЫ В АТМОСФЕРУ ОТ СТАЦИОНАРНЫХ ИСТОЧНИКОВ И УЛАВЛИВАНИЕ ВРЕДНЫХ ВЕЩЕСТВ

տոկոսներով՝ անշարժ (ամրակայված) աղբյուրներից անջատված ընդհանուր աղտոտիչ նյութերի նկատմամբ -
in percents of total amount of pollutants from stationary sources - в процентах от общего количества
отходящих загрязняющих веществ от стационарных источников




արտանետված վնասակար նյութեր - emission of hazardous substances - выброшено вредных веществ

որսված է վնասակար նյութեր - captured hazardous substances - уловлено вредных веществ

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐՆ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015 թվականին
## PAYMENTS FOR ENVIRONMENT PROTECTION BY DIRECTIONS 2015
## ПРИРОДООХРАННЫЕ ПЛАТЕЖИ ПО НАПРАВЛЕНИЯМ В 2015 году

տոկոսներով՝ընդամենի նկատմամբ - in percents of total - в процентах к итогу




(1) աղտոտիչ նյութերը ջրային օբյեկտներ և կոյուղի թափելու դիմաց - for harmful substances discharge in to water bodies and sewerage - за сброс загрязняющих веществ в водоемы и канализацию

(2) անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների դիմաց- for air polluting emissions from stationary sources- за атмосферные выбросы от стационарных источников

(3) թափոնակուտակիչներում տեղադրման դիմաց- for placing waste into the waste-collectors- за размещение отходов в отходонокопителях

(4) ՀՀ-ում արտադրված և իրացված, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց - for harmful goods produced and realized in RA - за товары, произведенные и реализованные в РА,

## ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՆԵՐՆ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015 թվականին
## PAYMENTS FOR USE OF NATURAL RESOURCES BY DIRECTIONS 2015
## ПЛАТЕЖИ ЗА ПРИРОДОПОЛЬЗОВАНИЕ ПО НАПРАВЛЕНИЯМ В 2015 году

տոկոսներով՝ընդամենի նկատմամբ - in percents of total - в процентах к итогу




(1) ջրօգտագործման դիմաց- for use water- за использование воды

(2) ոչ մետաղական հանածոների արդյունահանման դիմաց- for quarrying non metallic minerals- за добычу неметаллогических ископаемых

(3) կենսապաշարների օգտագործման դիմաց- for use of life stochs за использование биоресурсов

## ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015 թվականին
## CURRENT EXPENDITURES OF ENVIRONMENT PROTECTION BY DIRECTIONS 2015
## ТЕКУЩИЕ ПРИРОДООХРАННЫЕ ЗАТРАТЫ ПО НАПРАВЛЕНИЯМ В 2015 году

տոկոսներով՝ընդամենի նկատմամբ - in percents of total - в процентах к итогу

